



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

1 ՇՈՎՏԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 14)



ԲՈՎ Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Անասին արժանիք եւ կատարաց կարծիք. Լեւոն Սարգսեան . —
Ջէյրան, Ե. Սրմոնէշիանիւն . — Գիտական արձագանգ (անդամութեան կեր-
պէր), Յ. Ս. Փափազեան . — Մանուան արեւ դառն (Երկր), Ի. Ն. — Հայ-
կական ինդիքը ետադարարեան Համաժողովին առջեւ . — Կիսամանակ :



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ , ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ Ա Ռ Ն Ա

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի լուսն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլիտրիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք,
Արասասհմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք,
Ամերիկայի » » 2 1/2 աղար

“ՉԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգէին, նամակ, յօդուած, Լ. ապիր և զերք պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH
PENSIONNAT ARMENIEN
(Bulgarie) VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շաւիղի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆՐԱՊԵՏ ԿԻՍՏԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Թիւ 14

ԱՆՀԱՏԻՆ ԱՐԺԱՆԻՔԸ

ԵՒ

ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԿԱՐԾԻՔԸ



Եթէ կարելի ըլլար հաշուել այն բարբոջութիւնները որոնց ենթարկուած են մարդիկ լոկ չի հասկցուած կամ սխալ ըմբռնուած բառերու հետեւանքով, պիտի տեսնէինք որ աշխարհի մէջ պատահած դժբախտութեանց մեծագոյն մէկ մասը ծնած է մեր ամէն օր առանց հասկնալու, առանց իմաստին թախանցած ըլլալու արատանտով կամ գրած բառերէն:

Գրեթէ ամէն հասարակութեան մէջ կայ մեծամասնութիւն մը որ չի կրնար ըմբռնել իր արաստանած բառին իմաստը, և գարձեալ իր ըսածին ճշմարիտ ըլլալուն կոյր յամառութիւնն ունի: Սակայն պէտք է գիտնալ որ, բնութեան մէջ ամէն վիճակ, ամէն երեւոյթ, իր գոյութեան պատճառներն ու իր կազմիչ

պայմաններն ունի որոնց գիտակցութիւնը միայն անհատին ձեռնհասութիւն կուտայ ճշմարտագոյն վճիռն արձակելու:

Մարդիկ չարաչար գործածած կըլլան խօսքի ու գրչի ազատութեան իրաւունքները, երբ ամենայն դիւրութեամբ վճիռներ կարձակեն, պատգամներ կորոտան այն տեսակ խնդիրներու վերաբերմամբ, զորս երբեք ուսումնասիրած չեն և որոնցմով նոյն իսկ հետաքրքրուած ալ չեն: Պատմական քամի մը, ըստ որում հարաւէն կամ հիւսիսէն կը փչէ, իսկոյն կրնայ խանդարել, վերիվայր յեղաշրջել իրենց մտածմանց, պատգամներու բոլոր գէղը: Անմահ արժանիքները մէկ վայրկեանի մէջ կրնան խամրիլ, իրական ու ճշմարիտ համբաւները ալ կրննթարթի մը մէջ կը նսեմանան, ու տափակութիւնները, միջակութիւնները կը փայլին երկնքի աստղներուն պէս:

Այս երեւոյթը մտնաւանդ առեկի ընդհանրացած է մեր մէջ, որովհետեւ

տեւ մենք չենք վարժուած ուղիղ դատելու, իրականութիւնը նկատելու այնպէս ինչպէս որ է, և մեր անձնական կիրքերը, նախամեծարութիւնները, ճաշակը, հաշիւը աւելի մեծ դեր կը խաղան մեր դատողութեանց ու արտայայտած վրէժիւններուն մէջ, քան բուն, իսկական ճշմարտութիւնը:

Մարդոց և առհասարակ ընկերական երեւոյթներու վրայ ճշգրիտ դաշտափար մը յայտնելու համար պէտք է լաւ ճանչնալ զանոնք ու գիտնալ անոնց կարեւորութիւնը, բունած անցը, մէկ խօսքով, ունեցած արժանիքը բնութեան մէջ:

Աշխարհիս վրայ ամենէն անժըխտելիօրէն բացայայտ ճշմարտութիւն մըն է որ, երբեք բան մը ի զարտեղը գոյութիւն չունի բնութեան մէջ, և թէ ամէն էակ ճակատագիր մը ունի որ իրեն յատուկ է, ու նպատակ մը՝ որուն պէտք է հասնի: Այս նպատակը պէտք է ներդաշնակ ըլլայ անհատին բնութեան ու գործարանական կազմութեան հետ, քանի որ բնականօրէն սահմանուած բան մըն է: Եւ արժանիք մը այնքան աւելի բարձր ու գնահատելի կըլլայ, որքան զայն կազմող տարրերը աւելի կը մտնեն անհատը ծնող ընկերութեան իղձերուն ու նպատակին:

Ի՞նչ բանի մէջ պէտք է փնտռել որեւէ անհատին նպատակը, որ-

պէս զի կարելի ըլլայ արժանիքները զանազանել:

Քանի որ այդ նպատակը անհատին բնութեան և զայն կազմող տարրերուն արդիւնքն է, պէտք է ամէն մարդ ինքզինքը քննելով, ուսումնասիրելով հասկնայ իր կուշումը, ճանչնայ իր նպատակը: Մարդը իսկապէս յատկանշող տարրը իր բանականութիւնն ու իր սզատութիւնն է, և հետեւաբար իր նպատակը կը կայանայ այս երկու կարողութիւնները զարգացնելու մէջ:

Մարդ իր բանականութիւնը զարգացնելով և ազատութեան բնական սուրբը պատշաճօրէն վարելով, կը կատարելագործուի, կը լաւանայ, արժանիք կը ստանայ, այսինքն իր բարոյական արժեքը կը բազմապատկէ, ինքզինքը վարձատրութեան կարժանացնէ, ինչպէս որ, ընդհակառակը, երբ իր կարողութիւնները չմարզելով, կամ անյարմար գործունէութիւն մը տալով անոնց՝ նպատակէն չեղի, իր բարոյական արժեքը, կը կորսնցնէ:

Բոյսերը արժանիք չունին, որովհետեւ գործունէութիւն չունին. նոյն իսկ կենդանիները արժանիք չունին որովհետեւ իրենց գործունէութիւնը ճակատագրականօրէն նախասահմանուած ըլլալով՝ իրենց կատարածին պատասխանատուութիւնը չունին, և կերպով մը չեն տարբերի իրերէն:

Միայն մարգնէ որ արժանիք ունի, որովհետեւ ինզինքին տէրն է, որովհետեւ իր մէջ գտնուած ուժը լոկ իրմէ կը բխի, և որովհետեւ ազատ ու պատասխանատու էակ մը, անձ մը ըլլալով, իր նպատակն է իր մէջ իրականացնել մեծագոյն բարոյականութիւնն ու մեծագոյն կատարելութիւնը:

Անհատին արժանիքը ընկերութեան մէջ կարողայտուի հասարակաց կարծիքով:

Այն օրէն ուր խղճի ու մամուլի ազատութեան օրէնքը հաստատուեցաւ, ժողովուրդը իր իրաւունքներուն տիրանալով՝ քաղաքական իշխանութեան հաստ, հասարակաց կարծիքը տեսակ մը խարազան եղաւ, որ կը մտարկէ անխնայ բոլոր մտկաբոյժները, փառքի ու մեծութեան համար ժողովուրդը զահել փորձող գձուձ պնակալէզները: Հասարակաց կարծիքը յաճախ մեծ կշիռ ունի, երբ մտնուածն գ մասնաւոր կրքի մը կամ յայտնի թելագրութեան մը արդիւնք չէ: Մտաբոյ կիրքերը իրարմէ շատ տարբեր են և շատ անգամ իրար կը չէզոքացնեն, բայց մտաբոյն բանականութիւնը միշտ մէկ է: Երբ իրաքանչիւրին դատողութիւնը հաւաքաբար արողայտուի, կարծիքներուն ամենէն լաւը կը գոյտնայ, որուն կարծէ երբեմն կարեւորութիւն տալ: Եւ այդ գոյտնումը բնական է մեր մէջ. մենք տեսակ մը

անձնասիրութիւն ունինք, ուրիշին աչքին առջեւ չնսեմանալու, այլ, ընդհակառակը, մեծ երեւնալու հոգատարութիւն մը որ պատուոյ ըզգացում կը կոչուի:

Բայց դժբախտաբար հասարակաց կարծիքը, ընկերական այս մեծ ուժը, յուրի ազդեցութեանց հասանքին ենթարկուած՝ սառն ու մեղմանալով սխալներ կը գործէ, և արդարացի կերպով կ'արժանանայ գիտակից ու լուրջ մտաբոյ արհամարհանքին:

Որովհետեւ, — այսօր ժողովուրդը ոչ իր իրաւունքներուն կատարեալ գիտակցութիւնը և ոչ ալ իր մտային կարողութեանց անհրաժեշտ զարգացումը ունենալով, — հասարակաց կարծիքը կուռաճնորդուի կարգ մը շահադէմներէ, յաւակնոտներէ, անակզբունք և ոգէտ արարածներէ որոնք խմբագրի, կըրծնաւորի, հրապարակախօսի կամ վարժապետի գիմակին տակ կուգան հասարակութեան միտքը պղծատրել, կիրքերը յուզել, դատողութիւնը խանգարել: Հայրենասիրութեան, իրաւունքի և արդարութեան հնչուն սնունդներուն տակ, սովորաբար կը պարակուին այն տեսակ հաշիւներ ու կիրքեր որոնք լոկ կեղծաւորութենէ ու մտքի տկարութենէ առաջ կուգան: Այս տեսակ հանգամանքներու մէջ հասարակաց կարծիքը գնահատել մենէ միայն կախում ունի: Մեզի կը վերաբերի վճռել թէ մեր ուզածը կամ ըրածը ա-

ւելի լաւ է, թէ հասարակութեան պահանջածը :

« Ի՞նչ պիտի ըսեն » ի արհամարհանքը յաճախ շատ օգտակար է, և անկաշկանդ մտքի ու գերադասյն բարոյականի յատկանիչը : Ասկէ զատ հասարակաց կարծիքին մտրութեանց դէմ դնելու լաւագոյն միջոցը զայն արհամարհելն է . մարդ աւելի զօրաւոր կը դառնայ ինքզինքը, երբ իր մասին ըսուածները անգիտանայ կամ արհամարհէ :

Եթէ երկրի մը մէջ հասարակութիւնը այն աստիճան ապականած է որ, բոլորովին մոռցած է հնազանդութիւն, պատիւ, հաւատարմութիւն և օրէնք, այն ժամանակ փրկութեան միակ յոյսը անհատական նկարագրի վերականգնումն է :


Ուժով նկարագրի, հաստատումիտ ու վեհանձն մարդը ոչ միայն ինք իր ճամբան կը բանայ, այլ և հասարակութիւնն ալ իր ետեւէն կը քաշէ . անոր ամէն մէկ գործը իր ներքին եւին արտայայտութիւնը կը լլայ, վստահութիւն և ուժ կը ներշնչէ և յարգանք կազդէ ամենուն : Ֆաղաքական իրաւունքները որքան ալ ընդարձակ ըլլան չեն կրնար իր անկումէն բարձրացնել ազգ մը՝ որուն անհատները բարոյական ցեխի մէջ թաղուած են :

Քայց, երբ ազգի մը մէջ անհատական նկարագրիներն ալ անդառնալիօրէն կորսուած են, ըսել է թէ այլ ևս փրկելու արժանի բան չէ

մնացած, ու ատանկ ազգ մը չարժեր որ ապրի :

Ուր որ մեծամասնութեան խիղճը, վարքն ու բարքը բարոյագէտ առողջ է, հոն հասարակաց կարծիքն ալ առողջ ու ճշմարիտ կը լլայ : Իսկ ուր որ բազմութիւնը կեղտոտ է, եսամուլ ու վաւթար, ոչ օրէնք կը ճանչնայ, ոչ ճշմարտութիւն, հոն հասարակաց կարծիքն ալ ապականուած, խոյտառակ ու կեղծ կը լլայ :

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ



ՋԵՅԹՈՒՆ

Վիէննայի Մխիթարեանց սպարանէն նոր գիրք մը լոյս տեսաւ, « Ջէյթունին անցեալէն և ներկայէն », որուն հեղինակն է Ջէյթունի Գործին Ա. մասն է ասիկա . Բ. մասը, որ հաւանաբար պիտի պարունակէ Ջէյթունի վերջին տաննամայ պատմութիւնը, յառաջիկային հրատարակ պիտի ելլայ : Ա. մասը կը բաղկանայ 154 երեսներէ, մաքուր թուղթի վերայ, այն խնամոտ ու կատարելագործուած սպագրութեամբ, որ միայն Վիէննայի Մխիթարեանց սպարանին յատուկ է :

Հեղինակը իր յառաջաբանին մէջ կըսէ թէ Ջէյթունի մասին ցարդ հրատարակուած հայերէն ու օտար լեզուով գործերուն մէջ ամենէն ճշ-

գրիտ ու մանրամասն պատմութիւն պարունակողը ներկայ հեղինակութիւնն է: «Սոյն գրքոյկս հրատարակութեան տալով, կը գրէ, կը կարծեմ ծառայութիւն մը մատուցած ըլլալ ազնիւ բանասերաց, ուսումնասիրութեան նոր նիւթ մատակարարելով նոցա եւ լուրջ քննութեան ասպարէզ բանալով սիրելի հայրենեացս անցեալին ու ներկային, յորս պատահած անցքերու շատերուն ահանաատս վկայ ըլլալով ի գիր արձանագուցած եմ զոյնս. շատ զէպքերու պատմութիւնն ալ հաւաքած եմ ձեռագիր յիշատակարաններէ, զորս գուրգուրանօք կը պահէ Ձէյթունցիներ սրբավայրերու եւ սրտի խորերու մէջ:»

Հետեւապէս կարելի է բացարձակօրէն վստահիլ վաւերականութեանը այն հոմերական զէպքերուն, որոնք կը յորդեն կը զեղուն գրքին բոլոր էջերէն, յարատեւ սարսուռի մը տակ պահելով ընթերցողը, որ մէկ շունչով կը լսփէ կը լինցնէ հայկական այս արձակ գիւցագնեագութիւնը:

Ձէյթունի հին պատմութիւնը գրեթէ մութի մէջ է. Բագրատունեաց թագաւորութեան կործանումէն յետոյ՝ վարատական անեցիներէն մաս մըն ալ Միջերկրականի այս անմատչելի ժայտերուն վրայ ապաստաներ է, ձուլուելով արդէն հոն բնակող սահաւթիւ քաջերուն հետ: Երբ իսլամական հեղեղանման արշաւը ծածկեր քողերէ է ամբողջ Փոքր-Ասիան, անուռիկ կիրճերով պատնէշուած այս լեռնաշղթան ազատ մտացեր է անոր բռնատորական լուծէն: Ձէյթունցիներ, ժայտերու ազատասէր զաւակ, յաւեալ ըմբոստացեր է բռնական այդ ուժին զէմ: Գիրքը, 1780 թուակա-

նէն կսկսի պատմել Ձէյթունցիներուն անդադրում պայքարը թուրք կռուվարութեան զէմ, ռիւերիմ, արիւնուչտ, անողորմ պայքար մը՝ անձնուիրութեան, ազատասիրութեան, ու աննման սխազործութեանց անհատնում դրուագներով չզթայուած, զորս հնադարեան առասպելաբանները պիտի գիւցագնեագէին՝ զիցաբանական համեմատութիւններ տալով անոնց:

Չորս նահապետական ընտանիքներ, Շօլքոեան, Եաղուպեան, Նէնի-աիւնեա ու Սուրէնեան, կիշխեն արծիւներու այդ ապառաժուտ բոյնին վրայ, համերաշխութեան անանկ երկարաշունչ ու յաւերժական ոգիով մը որ պահ մը կը մղուիս մտածել թէ այդ քաջերը արդեօք բուն հայկական ծագում չունին, քանի որ սկիզբէն ի վեր մեր ազգային նկարագրին յատկանշական կողմն եղած է անհամերաշխութեան ոգին: Դարումը փոթորկալից տեւողութեան միջոցին, Վահագնի ու Վարդանի այդ հարազատ դաւակները մէկ անգամ միայն՝ զիպուածաբար՝ կը գժտին, ու իրենց սուրբը իրարու զէմ կը դարձնեն. բայց այդ եղբայրասպան կռուին մէջ իսկ Ձէյթունցիներ կը ներկայանայ միեւնոյն վեհանձն, քաջ ու ազնիւ լեռնորդին: Թշնամիք, քաջերու այդ անակնկալ պառակտումէն օգտուելու գերով, ամօթալից առաջարկներ կընեն մէկ կողմին, այդ անընկճելի մարդիկը իրենք իրենց ձեռքովը փճացնելու համար: Սահայն, թշնամին՝ անոր քաջութեան հետ միասին հաշուի չէր առած անոր անարատ ու անկաշառելի վեհանձնութիւնն ալ: Հաշտութիւնը չուտով կը գոյանայ ու հերոսները կը գիրկընդխառնուին՝ զիղջի տաք արցունքներով:

*
* *

Ձէյթունցիին ոչ միայն քաջ է, այլ եւ պարկեշտ է ու կրօնասէր, մուլեռանդ լուսաւորչական: Օտար դաւանութիւններ հոն չեն կրցած մուտ գտնել, անոր համար անշուշտ որ կատարուած փորձերը արգաւանդ գետին մը չեն գտած այդ բարձրագիտակ փայտերուն վրայ, ու ամլութեան դատապարտուած են: Իր երկիրը նուաճելու եկող անարգ թշնամիին դէմ երթալէ առաջ՝ զէյթունցիին փամուռն մէջ կաղօթէ խորին ու յափշտակուած ջերմեռանդութեամբ մը, ու ասով իր ուժը հարիւրապատկուած կզգայ: Ձէյթունցիին պարկեշտ է ու առաքինի. նենգութիւն, վատութիւն, անբարոյականութիւն յաւէտ անձանօթ բարքեր են իրեն համար: Կը պաշտպանէ իր թշնամին իսկ, երբ անիկա դիմէ իր օգնութեանը. իր բնածին յանդգնութիւնը, անվախութիւնը եւ զօրութիւնը գէշի չի գործածեր. անոնք իրեն համար միջոցներ են լոկ պահպանելու իտէալ անկախութիւնը. զոր կը դաւանի իրբեւ միակ միջոցը ապրելու մարդկօրէն: Եւ յարատեւ կերպով սնուցուած այս իտէալին իրագործմանը համար անվեհեր լեռնորդին ստիպուած է շարունակ կենալ իր հայրենիքին շէմքին վրայ սուրը հրացանը ձեռքը՝ վանելու համար իրարու յաջորդող յարձակումները:

Մարաշ նասող թուրք բաշաները իրարու ետեւէ գրոհ պուած են Ձէյթունի վրայ ու ամէն անգամուն խոյս տուած են կորակոր պարտութեամբ, ջարդուփշուր եղած: Մղուած այս պատերազմները առիթ եղած են Ձէյթունցի հերոսներու ստեղծմանը:

Գրքին էջերուն մէջ կը վխտան այսօրինակ տիպարներ: Ամենէն հետաքրքրաշարժներէն մէկն է Տ. Օհան քահանան, Տէլի-քէշիշ կոչուած: Անիկա մեր գիտցած թուլամորթ ու պորտաբոյժ տէրտէրներէն չէ: Ձինուած կը պատարագէ, բանակին առջեւէն կը վազէ՝ թշնամիին դէմ: Երկար կըլլայ հոս մի առ մի պատմել իր հիանալի շահատակութիւնները. հնութեան մէջ, անիկա Հերակլէսի կարգը պիտի դասուէր ու իր գործերը պիտի երգուէին դիւցազներգակներէն: Բայց անկարելի է չյիշել իր մէկ յանդուգն գործը, որով իր հայրենիքին ազատութիւնը կապահովցնէր: Մուրատ Գ. հրովարտակ մը տուած էր Ձէյթունցիներուն, զանոնք անկախ ու ինքնօրէն հռչակելով. միայն պարտաւոր էին 15,000 զրջ. վճարել Այս-Սօֆիա մզկիթին: Ձէյթունցիք այս հրովարտակին կրթնած կը դիմադրէին օսմոտանձգութեանց: Սուլթան Մահմուտին ասենը, կը փափաքին նորոգել այս հրովարտակը, ու այս գործը գրլուխ հանելու յարմարագոյն մարդը կը սեպեն Տ. Օհանը, որ հին հրովարտակը գրպանը գրած Պոլիս կերթայ, ու նախ եւ առաջ կը ներկայանայ հայոց Ստեփան Աղաւնի պատրիարքին, որ զայն տեսնալուն պէս կըսէ, « գուն քահանայ չես, ոչ ալ քու ժողովուրդը քրիստոնեայ, վասն զի քրիստոնէին չի վայլեր զէնք կրել ու սուր գործածել թագաւորին դէմ, որ Աստուծոյ փոխանորդն է »: Տէլի-քէշիշ, սաստիկ զայրացած, կը պոռայ. « իր անձը եւ իրաւունքը պաշտպանելը ապտամբութիւն է, հայր սուրբ »: Աղաւնին, զոր աւելի ազուա պէտք էին անուանել, բանտարկել կուտայ այդ խեղ տէրտէրը, ու

րուն հագուստն էր «չուխտ օալվուր, մէջքը լանո՛րի օալ, ոտքը կիւղ օւճօալի կոչուած Այնթապու կարմիր կօշիկ, գլուխը մեծ Քէս մը, և ֆէսին վրայ փաթտուած լանո՛րի շալ մը, այնպէս որ զինք տեսնողները թիւրքմէններու ցեղապետ՝ը կը կարծէին»։ Սակայն, Տ. Օհան, հակառակ պատրիարքին արգելքին, Սուլթան Մահմուտի կը ներկայանայ ճամբան կառքով գացած ատենը, և կը յաջողի հրովարտակը նորոգել տալով պատրիարքին քթին խնդալ ու իր քաջարի հայրենակիցներուն տանիլ յանձնել այդ թանկագին թուղթը։

Տ. Օհանի այս պատմութիւնը իր մէջ կը ցոլացնէ այն մութ ու ապականուած ոգին զոր թիւրքիոյ հայու թիւնը, ի բաց առեալ Չէյթունը, դարերով սնուցած և իւրացուցած էր՝ անարտունչ ու համակերպող ըստքուկը գառնալով արքունիկակ սուլթաններու զգուէջի բռնաւորութեանը։

Ազգին կրօնական բարձրագոյն աստիճանաւորին ապուշ յանդիմանութեանը ու խմսահ, չգաստիարակուած, գրեթէ վայրենի քահանայի մը փրօխա ու անվերհեր պատասխանին մէջ եղած տարբերութիւնը ազդուապէս ցոյց կուտայ ըմբոստեմը զոր հայու թեան մեծամասնութիւնը ունէր այն ատեն կեանքը վարելու եղանակին վրայ։ Կէս դարու ժամանակաւիջոցէ մը ետքը, որ անկից ի վեր անցաւ հայութեան վրայէն, ուղղը հողեկանապէս կը ներկայանայ հիմնովին տարբեր երևույթի տակ. անիկա այլ եւս հլու հպատակ մը չէ, հանդուրժող ամենէն ընդվզիչ, ամենէն հրէշային տիրապետութեանը որ երբեք տեսնուած ըլլայ մարդկային կեանքի պատմութեան մէջ։ Աղաւնիէն

ետքը պատրիարքներ ունեցած ենք որոնք յեղափոխութեան արծարծիչներն ու յառաջընթացներն եղան ազգին մէջ։ Այսօր գրեթէ ամբողջ հայութիւնը կեանքը ապրելու եղանակին վրայ բոլորովին համակարծիք է Չէյթունցի Տէլի-քէշիչ Տ. Օհան քահանային։

*
* *

Եւ սակայն, գրքին ծայրէ ի ծայր ընթերցումէն յետոյ, գաղափար մը կը զարնէ ուղեղիդ ու ցաւ մը՝ սրտիդ։ Ինչո՞ւ հայերը չեն պիտոցած օգտուել այնպիսի առիթներէ եւ այնպիսի ժամանակներէ, որոնք ամէն նպաստաւոր հանգամանքներ ու պայմաններ կը միացնէին հայութեան հաճար առեղծելու ազատ շունչ առնելու վայր մը, հող մը։ Ինչո՞ւ համար մեր ազգային ու կրօնական իշխանութիւնները անհեռատես ու հացկատակ քաղաքականութեան մը հետեւած են այն ատեն իսկ ուր փոքր վտանգումներով, յանգզնութեան ու անձնուրացութեան շարժումներով պիտի կարողանային հանգստութեան կռուան մը հաստատել ազգին համար, հոն իսկ ուր քաջարի հայեր զէնքի կոյր ու մոլեռանդ հաւատալիքը ունէին և որոնք իրենց յախուռն ու խիզախ նկարագրով գրեթէ աւելորդապաշտական արհաւելիք մը ազգած էին թուրք տարրին։ Անոնք որ յեղափոխութեան դէմ իրենց սլաքները կ'արձակեն շարունակ, կրնան անոր գերագանցապէս բարեբար ազդեցութեանը ու փրկաւէտութեանը վրայ համոզում գոյացնել եթէ պահ մը ենթադրեն, օրինակի համար, որ անիկա ազգին մէջ տարածուած ու արմատ ձգած ըլլար այն ատենն

խակ ուր Սուլթան Համիտ մը չիկար
 օսմանեան գահին վրայ եւ ուր Կիլի-
 կիոյ մօտիկը, ուրիշ հարստահարուած
 երկիր մը, Լիբանան, ինքնօրէն կը
 հռչակուէր՝ միանգամ ընդմիջտ ազա-
 տելով թրքական դժոխային տիրա-
 պետութենէն:

Հարկ չեմ գատեր, սակայն, նմա-
 նօրինակ կակծալի խնդիրներ յարու-
 ցանել հոս, քանի որ նպատակս էր
 ընթերցողին ծանօթացնել նոր հրա-
 տարակութիւն մը, տարբեր անշուշտ
 սովորական հրատարակութիւններէ,
 քանի որ անիկա ուղղակի մեր սրտին
 ու հոգիին կը խօսի՝ խորապէս յու-
 ղելով ու գնցելով զանոնք:

Ինչպէս արդէն ըսի, այս Ա. մասը
 կուգայ կը յանգի մինչեւ 1890 թուա-
 կանը, ու կը վերջանայ Սմրատ Բիւ-
 րատ Տ. Ղազարեանի (*) բանտարկու-
 թեամբը Հալէպի բանտին մէջ. յայտ-
 նի է այն մեծածխոր աղմուկը զոր
 այս գէյթունցի երիտասարդը հանեց
 իր բանտին խորէն, սարսափ ազդե-
 լով կառավարութեան ու իր ճարտար
 հնարքներուն մէջ տագնապեցնելով
 զայն:

Անհամբերութեամբ սպասելով Բ.
 մասին հրատարակմանը, դիտողու-
 թիւնով մը կուզեմ փակել այս գրա-
 դատականս: Հեղինակը իր գրքին մէջ
 իր բոլոր հոգն ու ուշադրութիւնը
 կեդրոնացուցած է Չէյթունի ազատա-
 սիրական շարժումներուն եւ ապրս-
 տամբական շահատակութիւններուն
 վրայ միայն. բնաւ խօսած չէ Չէյ-
 թունցիին ընտանեկան կարգ ու սար-
 քին, սովորութիւններուն, բարքե-

(*) Չորս տարիէ ի վեր Գահերէ կը գտնուի,
 ուր կը վարէ մասնաւոր վարժարան մը և Նոր-Օր
 թերթին խմբագրութիւնը:

րուն, ընկերային, կրօնական բմբու-
 նումներուն ու աւելորդապաշտու-
 թիւններուն վրայ, որոնք ամբողջու-
 թեամբ պիտի ներկայացնէին մեզ
 Տաւրոսի հերոսներուն նկարագիրը,
 ու հայութիւնը մանրամասնօրէն ու
 իսկութեամբ պիտի ճանչնար իր օրի-
 նակելի ազգակիցները:

Ե. ՍՐՄԱՔԷՇԷԱՆԼԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՄՆԵՂԱՌԻԹԵԱՆ ԿԵՐՊԵՐԸ

Բանաստեղծները կեանքը կտն-
 թեղի մը նմանցուցած են: Երեւա-
 կայութիւնով ապրող այս վերա-
 ցական արարածներուն նմանու-
 թիւնները թէև շատ անգամ դրա-
 կան և մանաւանդ գիտական մտր-
 դոց ծիծաղը կը շորժեն, սակայն
 պէտք է խոստովանիլ որ կեանքի
 նմանութիւննին բաւական ճիշտ է
 և կարժէ որ արձանագրենք զայն
 իբրև ճշմարտութիւն մը երբ գի-
 տենք թէ մարմինը շարունակ և ա-
 մէն օր այրումի, վառելու մէջ է
 (combustion) ու միշտ իւղ լեցնելով
 է օր պիտի կրնանք զայն յարատև
 անչէջ պահել:

Դժուար չէ գուշակելը թէ կեան-
 քի իւրը անունդն է: Մտունդը այն

տարին է որ գործարանաւորութեան ամենօրեայ կորուստին տեղը կը լեցնէ և կը նպաստէ մանաւանդ մարմնոյն զարգացումին, պահելով անոր մեքենականութեան միօրինակ կտնտնաւորութիւնը :

Պուշարտա՝ մարդուն ամենէն հարկաւոր սնունդը՝ ջուրը նշանակած է որ մարմնոյն ծանրութեան կէսը կը կշռէ : Երեւակայեցէք թէ օրը 2700 կրամ ջուր կարտադրենք զանազան ձեւերով (քրտինք, մէզ և այլն) և հարկ է որ անոր տեղը անմիջապէս լեցնենք :

Ջուրէն վերջը աղը կուգայ որմէ մեզ պէտք եղածէն առանապատիկ անգամ աւելի կը ներածենք, որպէս զի այրումի գործողութիւնը զօրանայ :

Աղէն յետոյ երկաթը՝ զոր մարդիկ մսէն (արիւնէն) կը ստանան և կենդանիները՝ խոտէն :

Իւզերը սուքութիւն տուալ կը բերեն և մեղրամոմին դերը կը կատարեն վառելու գործողութեան մէջ : Կրակ տուողը, բունկցնողը ներշնչած թթուածիննիս է որուն փոխարէն այրումին իբր հետեւանք՝ ածխային թթու կարտադրենք :

Այսպէս դեռ շատ մը տարրեր կան որոնք պէտք են մարդուն՝ ապրելու համար :

Արդ երբ մարդ չսնանի, չի վառ իր, երբ չվառի, չապրի . առոր համար

է որ անօթի մնացողը կը հալի, կը մնալի :

Չսնանիլը մարդուն կշիւը կը պակսեցնէ, այնպէս որ եթէ մեր մարմնոյն ծանրութեան 100 ին 30ը կորսնցնենք, մահուան դուռը կը հասնինք, իսկ երբ այս համեմատութիւնը չորս տասներորդի բարձրանայ այն ատեն մեռած ենք . ուրեմն սնանելու է ինչ կերպով որ ալ ըլլայ :

Յայտնի է թէ սնունդը բերնէն կը ստանանք և շատ հազուադէպ պարագաներու մէջ ալ քիթէն, ստկայն երբ ստամոքսի կամ սնունդանցքի փողի հիւանդութիւն մը բացարձակապէս արգիլէ ու կը իցէ սնունդ անցնելու բերնէն և երթալու մինչեւ ստամոքսը, այն ատեն բժիշկները ի՞նչ միջոցի կը գիմեն :

Քնաւ միտքերնուգ չպիտի անցնի և պիտի զարմանաք ալ երբ ըսենք թէ յատակէն, սրբանէն սնունդ կը մատակարարուի :

Կատակ չէ ըսածնիս և խնդալու ալ բան չկայ . հին դրութիւն մըն է սոսի որուն վրայ ուշադրութիւն դարձուցած է վերջերս Բարիզի մէջ գումարուած բժշկական համաժողովը և բարեհաճած է զբաղիլ այն պայմաններով որոնք նպաստաւոր կընծայեն յատակային անդատուութիւնը :

Վիւրցպուրկցի բժիշկ մը, աչքի

Ֆոն Լէօպէ կըսէ թէ քերթոնի պատրաստութիւնները և չեփած հաւկիթը ամենէն նախընտարելիներն են այս կերպ սննդառութեան համար, լուացքի (lavement) ձեւով:

Բէրթոնի մը պատրաստութենէն 60 կրամ՝ 300 կրամ կաթի մէջ լուծուած և կամ 3 հատ հաւկիթ 3 կրամ ազով բաւական է մարդուն, որը երկու անգամ կրկնելով: Այս տարրերը սպիտակախտ (albuminurie) հիւանդութիւնը չեն պատճառեր, միայն երկարատև գործածութեամբ մը երբեմն սրբանին նրբամաշկը կը բորբոքեցնեն, բան մը որ անօթի մեռնելէն աղէկ է:

Միակ մանրամասնութիւնը որ կայ այս գործողութեան մէջ, սա է թէ նախ կանոնաւոր լուացք մը անհրաժեշտ է, որպէս զի ճամբան մաքրուի:

Շաքարն ալ 300 կրամ ջուրի կամ կաթի մէջ 15-20 կրամ շափով յանձնարարելի է. իսկ անուշադրը (amidon) 50-100 կրամ՝ նոյնպէս 300 կրամ կաթի մէջ՝ ամենէն լաւն է, վասն զի այս տարրը աստիճանաբար միայն շտրքար կարտադրէ մութ անցքին մէջ և նրբամաշկի բորբոքումը թեթեւ կերպիւ կրակի և շուտ մը կանհետանայ:

Իւրերը չեն կրնար գործածուիլ, կըսէ Ֆոն Լէօպէ, անոր համար որ շատ քիչ քանակութեամբ կը ծրծ-

ուին. բայց կարելի է մաքրողական լուացքին համար գործածել անոնցմէ միսի (!) և քանիքէնաւի ընկերակցութեամբ:

Կաթը ջերմութիւն արտադրելուն համար ջուրէն նախամեծար կը համարուի, իսկ մնի ջուրը անօգուտ է:

Տօրթէօր Պոաս կը յաւելու թէ սնունդը մնայուն ոսկի մը միջոցաւ կաթիլ առ կաթիլ տալը աւելի լաւ է, վասն զի այսպէսով թէ օրական 1 1/2 լիթրաէն մինչեւ 2 լիթրա կրնանք հեղուկ ներմուծել և թէ մէկ անգամէն մեծ քանակութեամբ հեղուկի կիրարկութեան պատճառաւ վտանգներուն (syncope) առաջքը կանուրի, ինչպէս ինք փորձով հաստատած է:

Միայն լուացքի միջոցը չէ որով մարդ կրնայ սնունդ ստանալ երբ բերանը հանգստեան կոչուած է և ստամոքսը գործադուլի մէջ կը գրանուի. կայ նաև ներքնամորթային ներարկումով սննդառութիւնը որ առաջնոյն չափ յաջողութիւն դրատած է:

Նոյն Ֆոն Լէօպէն կըսէ թէ ամենէն յարմար տարրերը, այս դրութեան համար, ճարպոյին նիւթերն են որոնցմէ 50 էն մինչեւ 100 կրամ կամոյց կամոյց մարմին ներքեւ ներարկելով թէ՛ սուեցքներ առաջ չեն գար և թէ լաւ կը ծծուին (absorbition):

Շաքարածին տարրերը որոնք

բաւական սնունդ կուտան՝ գործա-
ծելի են եթէ հիւանդը ցաւ չըզգայ
գործողութենէն . իսկ շաքարը բա-
ցարձակապէս անյանձնարարելի է,
այն պատճառաւ որ անոր ներար-
կումը սաստիկ ցաւեր կը պատճա-
ռէ . գալով քէթթոնի և ուրիշ
պատրաստութիւններու՝ բոլորովին
անօգուտ են :

Համաժողովին եզրակացութիւնը
շատ նպաստաւոր եղած է : Երկու
դրութեան ալ օգտակարութիւնը
ճանչցուած և օրինակելի հաճոյա-
կատարութեամբ մը որոշուած է որ
երկուքը մէկանց գործադրուին
միշտ : Իսկ մեր եզրակացութիւնը
բոլորովին հակառակն է գիտուննե-
րուն եզրակացութեան : Մենք և մեզ
նման հանգիստ ապրելէն հաճոյք
զգացող մարդիկ չպիտի կրնան ըմ-
բռնել ժամ առաջ չմեռնիլը երբ
բերնէն զրկուելով ուրիշ միջոցով
մը պարտաւորուած ըլլան քաշ-
կըռակել կեանքը :

Եւ արդէն կարելի՞ է որ մարդ-
ընդունի անանիլ ճիշտ այն տեղէն
ուրկից դուրս պէտք էին ելլել՝
հաճոյքով կերած սնունդներնուս
անճուռնի մասերը . . . :

Ի՞նչ է ձեր գալափարը, ընթեր-
ցող :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



ՄԱՀՈՒԱՆ ՊԷՍ ԴԱՌՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ծղրիթը, թագչած բնութեան ան-
ծանօթ մէկ խորշին մէջ, մութին ող-
բը կը մեներգէր իր միակերպ սուր
կոխնչներովը : Աշնանամտի հեզաչըն-
չիկ զով զեփիւռը մեղմ շոյանքով
կանցնէր անհուն սարսուռի մը պէս :
Ու երկնքի աստղադարդ բեհեզին վը-
րայ լուսնին արտմաթախիծ կիսադէմ-
քը կը խոկար լալկանօրէն, նուրբ
ճերմակ ամպերէ շղարշուելով երբեմն :

Պարտէզին ամենէն անդորը մէկ
անկիւնը, կանանչուտ բարունակնե-
րուն տակ, բնութեան մեծվայելուչ
լուութենէն շրջապատուած, քով քովի
նստած են Տիգրան ու Զարուհի, սի-
րոյ գինովութիւնը վայելելով հոն :
Այնքան բուռն է սպաւորութիւնը
ներքին ու արտաքին աշխարհին, որ
անոնք, լուռ ու մունջ, արբշիռ, լոկ
ուսկն կը դնեն ծղրիթին միօրինա-
կօրէն տխուր երաժշտութեանը : Ան-
ծանօթին գրկէն դուրս ելած էակներ
են անոնք, միացած այդ խաղաղ վայ-
րը, շատոնց մոռցուած գորովանքի մը
հեշտութիւնը գտնալով իրարու մէջ :

Դեռ երէկ ամուսնացած, մեղրա-
լուսնի նախատօնակը կը կատարէին
կիսանուաղ լուսնի մը շողերուն տակ,
ամբան գիշերներու խորհրդաւոր մի-
ջատին սուր ու կերկերուն մեկնուա-
գին ձայնովը :

Երիտասարդը, որուն աժգոյն այ-
տերը մերթ կը լուսաւորուէին լուս-
նակին խուսափուկ ցոլքերէն, խոր
մտածման մէջ թաղուած էր, աչքերը

կիսախուփ, թեւը մանկամարդ կնոջ ուսին կրթնցուցած: Կերազէր: Ձրսպուռած հառաչ մը աստն աստն կուռնցնէր իր կուրծքը, որուն հեւքը կը մասնէր իր լոին յուզմունքը: Սյս վիճակը այնքան երկարացաւ որ Ձարուհի, մոտանջ, հարցուց:

— Տիգրան, ինչո՞ւ այդքան տըխուր կերեւաս. արդեօք երջանիկ չե՞ս զգար ինքզինքդ ինձի հետ:

— Կը հաւատա՞ն ատոր, Ձարուհի, պատասխանեց Տիգրան վշտագին հիասթափումով մը. սա լուսնկայ անուշ գիշերը, վիճակիս հաճելի նորութիւնը, վերջապէս չեմ գիտեր ի՛նչ բան մը միտքս հեռուները կը տանի, դէպի ախուր, շատ տխուր անցեալը, զոր երբեք չեմ մոռնար, քանի որ անիկա իմ կեանքիս թըշուառութեան սկզբնապատճառը եղած է:

— Անցեալը, ո՛հ, սոսկալի անցեալը, կրկնեց մանկամարդ կինը խորին հառաչանքով մը, սեւ ու գեղեցիկ աչքերը, արցունքով թաց, դէպի վեր լուսնին ուղղելով տըրտմագին:

Հիմա, երիտասարդը, լուսնեան խղունէն քաջալերուած, գուրս թափեց իր սիրաը խոցոտող ամբողջ դառնութիւնը:

— Ձարուհի, կը ճանչնաս ու կը սիրես զիս. բայց չեմ գիտեր թէ անցեալս ի՛նչ սարսափելի տուամ մըն է: Մեր ընտանիքը գաւառի ամենէն բարեկեցիկ, ամենէն երջանիկ ընտանիքներէն մէկն էր. Բաֆֆիի նկարագրած մտատիպար ընտանիքը: Շատ ուր էինք, հայր, մայր, եղբայրներ, հարսեր: Մեր խաղաղութիւնն ու եր-

ջանկութիւնը մերթ ընդ մերթ կը խանդարուէին միայն քիւրտերու դէմ մղուած կռիւներով, որոնց մէջ թէ՛ կը վնասուէինք եւ թէ՛ մանաւանդ կը վնասէինք այդ աւազակներուն: Ես այն ատեն հազիւ ութը տարու կայր ու Կարօ կը կոչուէի. քոյր մըն ալ ունէի հազիւ երեք տարու, ու մաքի մըն ալ. քրոջս հետ կը խաղայինք մեր հողերուն վրայ, միշտ մաքիին ընկերակցութեամբը զոր Շուշան կանուանէինք չափազանց ճերմակութեանը համար: Վերջապէս երջանիկ էի, աղոց յատուկ այն միամիտ ու անխառն երջանկութեամբը որ բուն իսկ երջանկութիւնն է:

«Յանկարծ գիշեր մը մեր տունը անձանօթ հիւրեր եկան. իրաւ է թէ միշտ հիւրը անպակաս էր մեր տունէն, սակայն ասոնց դէմքին արտայայտութիւնը քիչ մը տարօրինակ երեւցաւ մեզի: Ես եւ քոյրս, ընտանքաբար, սկսանք ցած ձայնով խօսիլ. սարսափնիս աւելցաւ երբ մայրս խորհրդաւոր կերպով մը պատուիրեց մեզի մէկուն բան չխօսիլ մեր հիւրերուն մասին: Հազիւ չարաթ մը անցած էր՝ մեր տան դրութիւնը կերպարանափոխ եղաւ. մայրս ու հարսերը գաղտնապէս կուլային, եղբայրներս տենդոտ վիճակ մը ունէին, իսկ խեղճ հայրս չափազանց տխուր էր ու կը մտածէ՛ր...»

Երիտասարդը, իր յուզած սարսուռալի յիշատակներուն թաղծոտ սպաւորութեանը տակ պահ մը լոնց, աւելի մօտենալով իր կնոջ որ, անմըսուող եւ տօգոյն, իր ամուսնին պատմութիւնը մտիկ կընէր: Տիգրան շարունակեց խորունկ ձայնով մը.

«Առտու մըն ալ երբ դեռ կը քնանայինք, սոսկալի ու որոտագին ա-

ղաղակներ հասան մեր ականջը. ընդոտտ ցատկեցի անկողնէս ու տեսայ որ ոտտիկաններ եկած պաշարած էին մեր տունը: Եղբայրներս պատրաստ կեցած էին զէն ի ձեռին... Ինեղձ մայրս, գրեթէ խելայեղ, գրկեց քոյրըս ու իմ ձեռքէս բռնելով մառանը տարաւ մեղի... հետերնիս առինքսիրական քնքուշ մաքինիս ալ: Մառանէն կը լսէի հրացանի պայթիւնները. պոռչտուքները կը թնդային ու կը դողացնէին զիս ու փոքրիկ քոյրս, որ վախէն կը թզկար: Վայրկեան մը տղայական յանդգնութեամբ դուրս սպրդեցայ մ'որ թագստոցէն... Ի՛նչ տեսնամ, Աստուած իմ. այդ ահաւոր տեսարանը զեռ աչքիս առջեւ է... կարելի՞ բան է մոռնալ. հայրս բակին մէջ փռուած էր անկենդան եւ արիւնլուայ. մայրս ու հարսերը մէջտեղ չկային, իսկ եղբայրներս զեռ կը կրուուէին յուսահատ քաջութեամբ մը... Սոսկումէս՝ մառան վազեցի եւ դուռը ամբապէս գոցեցի. ու մարմինովս ծածկեցի խեղճ քոյրս ու մաքիս, որպէս զի թշնամիները չտեսնան զանոնք: Սակայն շատ չանցած մառանին դուռը դղրդեցաւ եւ զինքուոր մը մեր վրայ վազեց, հարուած մը իջաւ գլխուս, ու ես նուաղած ինկայ...»

Երիտասարդը պահ մը շունչ առաւ. կուրծքը կը հեւար. Զարուհի ջղային շարժումով մը, զոր կարծես սոսկումը կը թելադրէր, բռնած էր հիմա Տիգրանին ձեռքը, մութին մէջ աչքերը տարօրինակ ցոլարձակմամբ մը, տենդոտ ու շուարուն: Լուսինը իր նուաղկոտ շողերը կը մաղէր տերեւներուն ցանցէն, ու ծղրիթը իր սուր երգին համաչափական խաղերը կը շարունակէր հնչեցնել անդորր գիշերուան մէջ:

Տիգրան, աչքերը կիսափակ, երազի մէջէ խօսելու պէս շարունակեց.

«Ձեմ գիտեր թէ յետոյ ի՞նչ եղաւ... միայն երբ աչքերս բացի, ինքզինքս դտայ ընդարձակ սրահի մը մէջ, ուր անկողիններ կային իրարու քով շարուած: Սակայն այդ անկողիններուն մէջ պառկող մարդերը ոտքոյն զէմքեր ունէին ու ձերմակ լաթեր հագած էին: Այնքան գիտակցութիւնը չունէի վիճակիս, որ պահ մը ինքզինքս արքայութեան մէջ կարծեցի. ու սպիտակ հագուստներով մօրուսաւոր երիտասարդ մը որ մեր շուրջը կը պտըտէր, Յիսուսը կարծեցի. յետոյ, այդ Յիսուսը քովս եկաւ եւ ձեռքերս բռնելով սկսաւ հետս խօսիլ զգուռը ձայնով մը. բաւական ժամանակէ ի վեր առաջին անգամն էր որ անուշ ձայն մը կը զարնէր ականջիս. հասկցայ որ երեւակայած Յիսուսս բժիշկ մըն էր միայն եւ այն չէնքը ուր կը գտնուէի՝ հիւանդանոց մը: Մինչեւ այն ատեն վէրքերս թոյլ չէին փար որ հետս խօսուէր: Երեք ամսոյ չափ մնացի հառաչներով ու ցաւերով լեցուն այդ տան մէջ. յետոյ անձանթ պաշտպանութեամբ մը մըտայ նախնական վարժարան մը ուսկից շիտակ Եւրոպա դրկուեցայ՝ իրբու պաշտպանեալը հարուստ անձի մը, որուն շնորհիւ զեղագործութիւն սորվեցայ:

«Երեք տարի կայ որ Պոլիս եկած հաստատուած եմ, ուր մեր ծանօթութիւնը՝ մանկութենէս ի վեր՝ առաջին զգացած երջանկութիւնս եղաւ: Այն սարսափի օրերէն ի վեր քսան տարի անցած է. բոլոր կրած վիշտերս, երեւակայութեանս եւ ուղեղիս վրայ այն ահռելի գէպերուն թողած տը-

պաւորութիւնը հետզհետէ անհետացան գացին. . . Մինակ ցաւ մը ունիմ սրտիս մէջ, որ բնաւ չի թեթեւար. անուշ, երանելի յիշատակի մը կըսկիծն է, ազուորիկ քնքուշ քրոջս հրեշտակի դէմքն է ան. երբեք չեմ մոռնար իր անմեղուկ նայուածքը, իր աչքերը որոնք ճիշտ քու աչքերուդ կը նմանէին. սիրտս կը գալարուի, անբացատրելի տխրութիւն մը կըզգամ . . .

«Մաքինիս ու հէ՛ք անուշ քոյրս, հեծեց Տիգրան արցունք մը սրբելով: Ո՞վ գիտէ որ աւազակ թուրքին հարէմին զարդը եղած է հիմակ ան, իսկ՛դճ ազուորիկ քոյրս. . .»

Յանկարծ, Չարուհի, որ մինչեւ այն ատեն տենդոտ լուսթեամբ մը մտիկ ըրած էր այս արիւնալի պատմութիւնը, Ղրաճգօրէն բռնեց երիտասարդին թեւը եւ յուզումէ խղզուած ձայնով մը հարցուց.

— Քրոջդ անունը . . .

— Լալա:

Մանկամարդ կնոջ ամբողջ մարմինը ցնցուեցաւ ու բիրտ հարուածէ մը շանթահարուածի պէս, ինկաւ ամուսնին գիրկը շնչասպառ ու օրհասական աղաղակով մը.

— Եղբա՛յրս:

Ու, տիրող անաւոր լուսթեան մէջ, ծղրիթին կռինչը երկարեցաւ ողբական արձագանգումով մը:

Ի. Ն.



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԱՌՋԵԻ

Այս օրերս Բարիդի մէջ գումարուած է յօաղաղութեան խննդորդ Համաժողովը, որ աշխարհի խաղաղութեան սպառնացող վտանգներէն մէկն ալ հայկական խնդիրը նկատելով՝ իր սեղանին վրայ բերած դրած է զայն:

Սեպտեմբեր 24 ի նստին մէջ, ուր ականաւոր անձինք ներկայ էին, Պ. Նովիքով կը կարգայ որսչումը զոր առաջարկած էր համաժողովին յանձնախումբը.

Յաղաղութեան տիեզերական իններորդ համաժողովը տեղեկանալէ յետոյ Հայաստանի վերաբերող այն յիշատակագրին զոր ներկայացուցած էին Պ. Պ. Կամպարօֆ, Գօլալէվսքի, Սոպոլէվսքի, Լա Ֆօնթէն, տը Ռօպէրթի, Նովիքով, Լիւսիէն լը Ֆօսայէ, Առաքէլեան, Լօբիս Մէլիքօֆ, սա կարծիքը կը յայտնէ թէ հայկական կոտորածները կը ներկայացնեն ամենէն ամօթալից գործը որ կատարուած ըլլայ վերջին ժամանակաց մէջ: Իր համակրութիւնը կը յայտնէ այս դժբախտ ազգին համար, եւ կը մաղթէ որ Օսմ. կառավարութեան վրայ պարտք դրուի յարգելու հայոց անկապտելի իբաւունքները, որոնք եւրոպայաւորուած են Պերլինի դաշնագրով:

Ռուս երեւելի խնտոտատէր ու

ընկերարանն Պ. ար Ռօպէրթի յաւելուած մը կառավարկէ այս որու շումին : Հէք Հայաստանը քիչ մը զոհ գացած է երկու աւելի մատիկ այժմէութիւններու , թրանսվալի և Չինաստանի : Սակայն իր դատը գէթ նոյնքան շահագրգիռ է որքան Պօէրներունը . 300,000 այր, կին ու սղայ սրէ անցած վեհապետի մը հրամանովը , տիեզերական խիղճը սարսուացնելու բռն չէ՞ ստիկա :

Քանի որ Եւրոպա օրինաւորապէս իրաւունք ունի Բ. Դրան վրայ պարտք դնելու բարենորոգումներն ու խաղաղութիւնը , ինչո՞ւ չըրաւ այդ բանը : Վատութեան ու անսարքերութեան ի՞նչ հով մը կը փչէ այս պահու թաղաքակիրթ աշխարհին վրայ, որ անզգածօրէն ներկայ կը գտնուի ամենէն ահուելի եղենագործութեանց : Անաչառ պատմութիւնը ի՞նչ պիտի մտածէ մեր դարուն վրայ :

Ու համակրելի բրոֆէսօրը կը կարգայ հետեւեալը , որ պիտի կցուի առաջարկին .

Համաժողովը իր ցաւը կը յայտնէ որ պառակտումները , նախանձութիւնները եւ մասնաւոր շահերու անձուկ ըմբռնումը իւրաքանչիւր պետութեան մինչեւ ցարդ արգելած ըլլան յիշեալ դաշնագիրն ստորագրող տէրութիւնները իրենց ամենէն տարրական պարտքը կատարելէ հանդէպ ժողովրդեան մը զոր անվիճելի ու իրաւաբանական արժէք ունեցող յանձնառութեամբ մը ստիպուած

էին պաշտպանելու : Համաժողովը կը յուսայ թէ տիեզերական խղճին բողոքը եւ քաղաքակիրթ աշխարհին զայրոյթը վերջ ի վերջոյ պիտի հարկադրեն եւրոպական տէրութիւնները հայկական այս ցաւագին խնդրին արմատական լուծում մը տալ , ինչպէս եղաւ դեռ վերջերս կրէտէի համար :

Բաւական երկարառե պոյքարէ մը ետք , որուն կը մասնակցին թորք մը , Պ. Ահմէտ-Րիզա , ու երկու հայ պատուիրակներ (*) գտնուող մազերով , անփայլ գոյնով , սև աչուրներով , կընդունուի Պ. ար Ռօպէրթի առաջարկը , բաց ի նախադատութեան վերջին կատրէն ի մատին կրեատէի , զոր կը ջնջեն :

Ասոր վրայ Պ. Ահմէտ-Րիզա կառավարկէ համաժողովին քուէարկել ցաւի հետեւեալ արտայայտութիւնը .

Համաժողովը ցաւ կը յայտնէ որ մեծ տէրութիւնները , փոխանակ նըպատաւորելու ընդհանուր բարենորոգմանց իրագործումն ի Թուրքիա՝ առանց ցեղի ու կրօնքի խտրութեան , պաշտպանած ըլլանու դեռ պաշտպանեն կամայական վարչութիւնը Սուլթանին , որ սիսթեմաթիք կերպով հակառակ է ամէն քաղաքական ու ընկերային բարեփոխման եւ որ ճշմարիտ պատճառն է կառավարական խառնաշփոթութեան եւ այն դժբախտութեանց որոնք կը ճնշեն իսլամները նոյնքան որքան քրիստոնեաները :

(*) Ֆէլօ , ուսկից կը քաղենք այս տեղեկութիւնները , չի յայտնէր այդ երկու հայերուն անունները , որոնք անշուշտ պիտի ծանուցուին :

Ուրիշ ասենախօս մը, Պ. Սեպտիմիան վուառօլ, բնիկ Շուէտացի, կը խնդրէ որ համաժողովը ընդ հանրացնէ ինչիւրը: Հասկցնելու համար կը բաւէ քանի մը անուններ արտատանել. Իւլանտա, Ֆինլանտա, Արարիա . . . և սա ըզձանքը կառավարիչէ:

Համաժողովը կը ցաւի հաստատելու թէ զանազան կառավարութիւններ կը շարունակեն առթապարտ ճնշում մը ի գործ դնել իրենց սիրապետութեան տակ ինկած ազգերուն նկատմամբ:

Բարձր ուսմանց վարժարանին բրօֆէսօր Պ. Մառիլիէ կը պնդէ որ խաղաղութեան համաժողովը չի կրնար խառնուիլ ոչ ժողովրդոց անցեալ պատմութեան ոչ անոնց արդի ներքին քաղաքականութեանը: Հետեւապէս կը հարուածէ Պ. Ահմէտ-Րիզան սուլթարի: Սակայն ինք կուսակից է կոչում ընելու Պերլինի դաշնագրին 61րդ յօդուածը ստորագրող եւրոպական աւելութիւններուն, որոնք իրաւունք ունին Սուլթանէն պահանջելու ճշգրիտ գործադրութիւնը հայոց անկախութեան ու ապահովութեան եւաշխատութիւններուն:

Ահմէտ-Րիզան և վուառօլի յաւելուածական առաջարկները կը մերժուին ստուար մեծամասնութեամբ:



Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Կ

Նախորդ հինգշաբթի օրը Պոլսոյ մէջ յոյն մը ձերբակալուած է ուժանակի ստուար ծրարով մը, որուն վերայ հայու մը հասցէն գրուած է եղիբ: Այս պատճառաւ խնդ մը ձերբակալութիւններ տեղի ունեցած են. ձերբակալուածներուն մէջ կը գտնուի սպայ մը որ մեծ-կարգոսին ազգականն է:

— Սեպտեմբեր 20 ին 42 հայեր Պոլսէն արտորուել են:

— Պարոն Զինովիէֆ, ռուսական դեսպանը, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարին հետ տեսնուած ատեն, պահանջեր է որ էրզրումի ռուսական փոխ-հիւպատոսին վրայ յարձակող քիւրտերը ձերբակալուին, պատժուին, և հրօսակ քիւրտերու աւարառութեանց վերջ մը տրուի անպատճառ: Պոլսոյ թերթերը կը ծանուցանեն թէ՛ Սուլթանը Զինովիէֆին իֆթիխարի ազամանդակուռ պատուանշանը նուիրեր է, և յատուկ պատգամաւորութիւն մը պիտի զրկէ Լիվաթիա Չարին բարի գալուստ մաղթելու համար: Այս պատգամաւորութեան պիտի ընկերանայ նաև Զինովիէֆ:

Վրիպակ. — Շուէլի 12րորդ թիւին 184 էջի 21րորդ տողին մէջ «կը տկարանայ և» բառերէն յետոյ պէտք է աւելցնել նաև հետեւեալը «Ելունդները երբ կը շարունակեն, չեն պարունակեր այլևս գաւիլ» այս գիտնալով է որ և այլն:

Отговорникъ Н. Драгулевъ

Печатница «ОрIENTAL» — Варна.

ՀՐԱԻԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

1887

ԺԴ. ՏԱՐԻ

1900

” Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ . .

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻՋՐԸ

Հայ-Գրական յօդուածներէն զաս՝ հեղիւ սեղեկութիւն կը սրուի հայ-գրականութեան, պատմութեան, եւայլն նկատմամբ ամէն ամիս ելած նոր հրատարակութեանց վրայ: Նոյնպէս քննադատական սեղեկութիւն կը սրուի ազգային լրագրաց մէջ սպուած կարեւոր լեւու վրայ:

« Ազգային լրագրաց բովանդակութիւն », քղրակցութիւն, ծանուցում, եւայլն:

Խմբագրութեան յրկուած ամեն գրքերու վրայ՝ քննադատական համարոս սեղեկութիւն սալը պիտի շարունակուի:

Մեր հեղինակ Ընթերցողաց հանելի նորութիւն մը յուսանք պատճառել այնու որ խմբագրութեանս ուղղուած գրքերն անմիջապէս յաջորդ ամիսն թերթիս ծածկին վրայ պիտի հրատարակուին: Այն գրքերն որոնց վրայ մտադիր ենք խօսելու՝ կը զանազանենք միւսներէն աստղանիշով (*) մը:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Հայկական դրատան մէջ կը գտնուին հետեւեալ նոր հրատարակութիւնները:

Սրբազան Պատմութիւն — Հին Կտակարան — պատկերազարդ, տպագ. 1900, գին 1 Ֆր.

Սրբազան Պատմութիւն — Նոր Կտակարան — պատկերազարդ, տպագ. 1900, գին 1 Ֆր.

Ընթացք շարադրութեան եւ վայելչախօսութեան, պատկերազարդ, Ա. տարի, գին 1 Ֆր.

Նորագոյն ընթացք աշխարհագրութեան, տարրական Ա. տարի, աշխարհացոյցներով եւ պատկերներով, տպագ. 1900, գին 70 ասնթիւ:

Նոր Ֆրանս Հայկական կամ Հաւաքածոյ հին եւ նոր Ազգային Երգերու, գին 2 Ֆր.

Հասցէ՝ Ա. ԶԱՐԳՆԱՆԷԼԵԱՆ — ՎՍՈՒՆԱ.

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ս. Ռ. Ն. Ս.

Երկրորդ քաղ, Շիրչենսիա փողոց, (Մագաղլը յեշմեի կից)

Կը սպագրուին հայերէն, պուլկարերէն, զազղերէն, յունարէն, աաճկերէն և այլ լեզուներով՝ այցեառման, հասցէառման, հարսանեկան հրատիրագիր, ազգարարութիւն, նամակազրուիս, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գելը, լրագիր, եւ այլն:

Գունաւոր և ոսկեգօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ սաւեր և մասնաւր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆՍՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԳԻՆԵԼ ԵՈՅԺ ԳԻՒՄՄՍՉԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ հետաքեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).